**04.11.24 - 04.11.24**
11:00
**Անցանց**
Գրանցումը փակ է
☐

Պահպանել Google օրացույցում
ԵՊՀ եվրոպական ուսումնասիրությունների կենտրոն, Ռոբերտ Շումանի անվան սրահ

**Ս.թ. նոյեմբերի 4-ին՝ ժամը 11:00-ին, ԵՊՀ եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնի Ռոբերտ Շումանի անվան սրահում** տեղի կունենա Սոցիալական աշխատողի օրվան նվիրված աշխատաժողով:

«Սոցիալական աշխատանք. նվիրում և համագործակցություն» խորագրով ա շխատաժողովի ընթացքում կանցկացվեն հետևյալ պանելային քննարկումները.

1. ԵՊՀ սոցիալական աշխատանքի և սոցիալական տեխնոլոգիաների ամբիոնի ուղին (2004-2024 թթ.)
2. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության վերջին բարեփոխումների տեսլականը և ԵՊՀ շրջանավարտների դերը այդ գործում
3. Հայաստանի սոցիալական աշխատողների ասոցիացիայի ձեռքբերումները և ԵՊՀ շրջանավարտների ներգրավումը ՀՍԱԱ-ում
4. Սոցիալական աշխատանքի կրթությունը ՀՀ այլ բուհերում
5. ԵՊՀ շրջանավարտները սոցիալական ոլորտի ՀԿ-ներում
6. Մեր ուսանողները

Աշխատաժողովին մասնակցելու են ՀՀ ԱՍՀՆ Նարեկ Մկրտչյանը և Նոբելյան մրցանակակիր Սաթյարթի Քայլաշը:

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
(+37460) 710000
info@ysu.am